

Հնչակեան Պատմութեան Էջերէն

ԲԱԳՐԱՏ ՄԻՒՆԻՔԻ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

Գ.

Գործադիրի ժողովին ներկայ էր նաեւ Իզմիրի մասնագիտի վարչութիւնը:

Քննարկելով Իզմիրի կացութեան մակերեսը, Միւնիքի յարուցած ծանր խնդիրները (նշարելի չէին: Սովորական վիճակով կեանքը կ'ընթանար. յոյն բանակի իրարամտէց ներհակութիւնները սակայն մասամբ նշարելի էին: Ընկերներէն ոմանք հաղորդագրեցին թէ՛ քաղաքական յոյն զինուորներէն շատեր դասալիք եղած մեկնած են Յունաստան: Կուսակցութիւնը սակայն հնարաւորութիւն չունէր յունական գրամամ բանակին դէմ երթալ կամ օտար երկրի մը անձնակազմ լեռներուն ապաստանիլ: Մեզի վիճակուած էր մեր ունեցած միջոցներով մեր տան պատուհաններէն ինքնապաշտպանութեան ողորմելի վիճակին ենթարկուիլ:

Գործադիրի անդամ ընկ. Հմայեակ Քէչեճեանը կանգնեցաւ եւ եզրակացուց այսպէս. «Ընկերներ, իր ամբողջ կեանքով յեղափոխական եւ ատոր համար ալ անտուն եւ թափառական դարձող մեր պատուական գործիչ ընկեր Միւնիքը կը փորձուիմք արհամարհել եւ նոյնիսկ զայն կոչել խենթ: Ես կ'ըսեմ, թէ մեր մէջ միակ խելացի մարդը ընկեր Միւնիքն է, եւ ճիշդ է ընկեր Միւնիքը, այո՛, դաշնակից մեծերը Իզմիրը յոյներուն պիտի չքողուն, ընկերը ինչ որ կ'ըսէ շիտակ է. կու գամ յայտնել թէ՛ վարդուրէ սկսեալ եւ իմ մանածի խանութս պիտի փոխադրեմ նաւը եւ զաւակներու ձեռքը բռնելով պիտի մեկնիմ Յունաստան: Կը թելադրեմ, որ իմ ընկերներս ինձի հետեւին փոթորիկը զալնի առջաջ»:

Ընկեր Քէչեճեանի վճռի ճնշիչ տպաւորութեան ենթարկեց ժողովականները: Թղթական ջարդերէն եւ արտոն վերապրած հայութիւնը դժուարին պայմաններով հագիւ թէ յաջողեր էր տուն տեղ ըլլալ եւ ինքնաբարս ապրուստի մը միջոցները ապահովել Իզմիրի մէջ, եւ հեշտ չէր նոր արքայի մը ճանապարհը բռնել:

Այսուհանդերձ հանգամանքները ինչ որ ալ ըլլային, Իզմիրի հայութիւնը ճակատագրական դաժն իրողութեան ներքեւ էր եւ քեմալական զօրախումբերը, ծովը թափելով յունական պառակտուած բանակը, պիտի գրաւէին Իզմիրը:

Հնչակեան ժողովը որոշեց Ազգային վարժարանի սրահին մէջ սարքել հրապարակային լուսարանական մեթոդով Լճիոն Գարահիսարի ճակատին վրայ մեծամեծ տառերով եւ ամրապնդել ժողովուրդի թուլացած տրամադրութիւնները: Յայտարարուած յաղթանակները իրականութեան անհամապատասխան ընդհակադրելով Լճիոն Գարահիսարի ճակատին վրայ թուրքերը գերիշխող դիրք գրաւելով՝ կարճ ժամանակամիջոցի մէջ պիտի պատռէին հեղինակներու ուժերը եւ պիտի տիրակալէին Իզմիրին:

Ծանօթ վաճառական ընկեր Քէչեճեանը իր մթերանոցի ապրանքները սկսաւ փոխադրել նաւը: Ընկերոջ այս քայլը Իզմիրի հայ վաճառականները ենթարկեց լուրջ մտածողութեան: Եւ տեսնելով որամաստան իրենց գումարները փոխանցեցին երուպական դրամատուները, իսկ ոմանք ալ ընկեր Քէչեճեանին հետեւեցան:

Հելլենական գրաման պաշտօնատեղին Հնչակեան կուսակցութիւնը ծանրորէն յանդիմանեց եւ սպառնաց զինուորական ատանին յանձնել եթէ ժողովուրդը «յուսահատեցնող» որեւիցէ քայլի դիմէր: Ընկեր Միւնիքը իր ձեռագիրներու կապոցը անութիւն տակ բռնեց ինքնաքստի ճանապարհը եւ ուղեւորուեցաւ Պոլիս: Նաեւ յաճախադէպ կը հանդիպէին Իզմիր, եկած մտերմ տեսանելի թուով հայերով լեռնած՝ կը մեկնէին Յունաստան եւ այլ երկիրներ: Մնացողները ճաշակեցին Իզմիրի գրաման դառնութիւնները:

Հօր դաշնակիցներու ռազմաճակատները կայանաւորուած թուրքերը իրենց յատուկ բարբարոսային խժոժու-

թեանց ենթարկեցին հայ եւ յոյն ժողովուրդները եւ բռնագրաւեցին Իզմիրը...: Եւ մինչ քաղաքը կը մոխիրանար դժոխանման հորդեհէն եւ բազմահազարներով հայ եւ յոյն անմեղները կը ջարդուէին, դաշնակից ռազմաճակատը գրաւուած էին շարժանկարութեամբ, շահամոլութեան նիւթ հայթայթելու Եւրոպայի եւ Ամերիկայի թատրոններուն:

Ընկեր Միւնիքը յեղափոխական տաժանակիր ճանապարհին դարձեր էր գրքկարներով ապրող ճգնաժամ: Անոր սովորութիւնն էր առանձնանալ, թաղուիլ խոկումներու մէջ եւ շարունակ գրել իր տպաւորութիւնները: Իր ստանձնած գործերէն մեծ մասը կը մնար կէս ճանապարհին: Իր հայեացքներուն որեւիցէ ընդդիմութիւնը փոթորիկ կը ստեղծէր Միւնիքի մէջ ու ան կը քալէր դուրս գայրացած եւ կ'անգիտանար, խնդիր չէր թէ օրերով մնար քաղցած ու անճամուկ:

Միւնիքը ընկճող միակ բանը ծխախոտն էր: Ծխախոտի կարօտին չէր դիմանար: Քաղցածութիւնը նշանակութեամբ գործէր անոր համար: Իր խանութներին համապատասխան ընկերներուն հետ հաճելի ժամեր կ'անցներ, աւելի ճիշդ է ըսել՝ գաղափարական դաստիարակ մը կը հանդիսանար: Ան կ'ընկերակցէր աշխատատեղի խոնարհի խաւերէն սեռած ընկերներու եւ զանոնք կը տոգորէր Հնչակեան կուսակցութեան պատմական գործերու ոգիով: Միւնիքը ազգային եւ կուսակցական անցքերը կը ներկայացնէր ճշգրտութեամբ: Ան սովոր չէր հասարակ դէպքերէն հերոսութիւններ հիւսել: Անոր համար սխալը սխալ, իսկ շիտակը շիտակ էր:

Հնչակեան կեանքին մէջ Միւնիքի կուսակցական տիպարներն էին, ընկերները Խանազատ, Փարսմազ, Մապահ Գիւլեան, Լազո, Պապուր, Գարեգին Կոզիկեան, տոքթ. Պեննէ, Ծիհանկիւլ, Ժիրայր, Աշրգալաշեան, Մուրատ եւ նմաններ: Այն կուսակցականը որ իր բոլոր կեանքով մտնի նման չէր հալուէր Տաճկահայաստանի ազատագրման գործին ճանապարհին վրայ, այդպիսի արժէք եւ նշանակութիւն չունէր Միւնիքին համար: Եւ ինքը Միւնիքը այդ մեծ տիպարներէն մէկն էր: Իր խօսքին եւ իր մտածելակերպին վրայ անտեղիտալիօնէն կեցող այս մարդը հնչակեան կեանքին մէջ բացառիկ երեւոյթ էր: Յեղափոխական այս տիպարը թէեւ շատ քիչերուն դարձաւ մատչելի, բայց ան իր ամբողջ կեանքով մնաց հնչակեան առանց գաղափարական անձնափոքրիկ երերումի:

1912 թուականին, Պոլսոյ մէջ կայացաւ Հնչակեան կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական Ժողով, տաճկահայ ընկեր մտաւորականներէն շերտ մը՝ քրճնադատութեան կ'ենթարկէ Իթքիիատին հանդէպ ընկեր Մապահ-Գիւլեանի յայտնուած ընթացքը: Միւնիքը իբրեւ Կովկասի Շրջանի Պատգամաւոր անգուսպ յարձակման կ'ենթարկէ Մապահին դէմ արտայայտուող հոսանքը եւ սեղանի վրայ ջուրի գաւաթը տախտակամածին վրայ փշրելով դուրս կ'ելլէ ժողովէն:

Անկախ մնալով դարաբաղցիին բորբոքումներուն, ժողովը կ'որոշէ Միւնիքը գործիչի հանգամանքով ուղարկել Տրապիզոն: Նաային տոմար կը կտրէ տոքթ. Պեննէն: Միւնիքը, ընկերը Մապահի թելադրանքով կը համաձայնի մեկնել: Ընկերները կը նկատեն, որ Միւնիքը ոչ դրամ ունի հետը եւ ոչ ալ ուտելիք: Կեղտոնը կողով մը ուտելիք եւ ոսկի մը ընկեր Աշրգալաշեան յանձնելով կը փութացնէ նաւը:

Բագրատ Միւնիքը համեստ հայ ծնողի մը գաւակն էր: Այն օրը որ իր հօրեանկան տունը ձգած է այլեւս ետին նայած չէ, մտեր շարունակ է Հնչակեան կուսակցութեան, ապրել ու ընթացել է միայն ու միայն կուսակցական, հասարակական գործի ուղղութեամբ եւ այժմ իր յոգնատանջ աճիւնները կը հանգչին լիբանանեան հորիզոնին ներքեւ...:

Իր ծերութեան վերջին օրերը անցուց Լիբանան՝ ընկերներու մօտ, որոնք ընկերական վեճ պարտականութեամբ իրենց լաւագոյնը ըրին եւ ինքնին փոխարինեցին կուսակցական ճանապարհի վրայ հայտնող ծերունի ընկերոջ մը ընծայուելիք պարտականութիւնը:

Մեր հայեացքներով այլազան տարօրինակութիւններով շարունակ Բագրատը, արհամարհելով կեանքի փարթամութիւն-

ները, գաղափարական յեղափոխականի ամբարկու կամքով եւ անսպառ հաւատքով գործեց միշտ, մնաց Հնչակեան եւ ողջերուն կտակեց Տաճկահայաստանի ազատագրման գործին նուիրականութիւնը:

Ընկեր Բագրատը ուժգին շեշտներով կը կրկնէր թէ՛ «դրամատիրական քաղաքականութիւնը հիմնուած ըլլալով շահամոլութեան խախտու պատերուն վրայ, աստիճանաբար պիտի կորսնցնէ շահակցական բոլոր յենարանները եւ փուլ պիտի գայ իր կուսակուած ժամրութիւններով: Եւրոպական կապիտալիզմի փշրանքներով սնանուող Թուրքիան տարբեր վախճան չի կրնար ունենալ, նա էլ պիտի խորտակի եւ նրա անկումից ծագելու է հայ եւ թուրք աշխատատրութեան ազատագրութեան արեգակը: Մտահան չընենք սակայն թէ՛ իւրաքանչիւր հայ իր կեանքի սրբութեանց սըրբոցը հանդիսացնելու է իր հայրենիքի ազատագրումը եւ մենք որպէս դարձելով տառապող ժողովուրդ, իւրաքանչիւրիս ուսին պարտականութիւն դրուած է շարունակ հարուածել եւ նպաստել քրքրական բռնակալութեան քայքայման: Այս սրբազան աշխատանքը տանելու են թէ արտասահմանի եւ թէ Հայաստանի հայութիւնը: Նպաստաւոր մտնէնտի լինելու է եւ արդէն կայ հայոց ձեռք բռնող ուժը: Նրան ենք պարտական ներկալ Հայաստանը, նրանով գալիս է Միացեալ Հայաստանը»:

Ընկեր Միւնիք գրականութեան այլազան ճիւղերու մէջ ցուցաբերած է գնահատելի հմտութիւն: Քաղաքական եւ ընկերվարական խնդիրներու շուրջ գանգազանումներով աշխատակցած է «Հնչակ», «Ապագայ», «Նոր Աշխարհ», «Տրիտասարդ Հայաստան», «Մուրճ» եւ այլ թերթերուն:

Ընկեր Միւնիքը սկիզբէն ի վեր տարուած էր երկասիրութիւններով: Ցարական հալածանքներու շրջանին իր շատ մը ձեռագիրները փճացած են. փորձած է վերյիշել փճացածները հետը առած՝ տարած է երկրէ երկիր, բազմացնելով գանձեր նորանոր երկասիրութիւններով:

Իր ձեռագիր հեղինակութիւնները թաղուած՝ անթղթուած գանձեր են: Ըստ քիչեր, քանի մը ընկերներու միտքին, ծանօթ են անոր ձեռագիրներուն արժեքին: Հեղինակը գանձեր տպագրելու ամենափոքրիկ մտահոգութիւնն իսկ չունէր, կը գրէր նորեր:

Միւնիքի հեղինակութիւններէն տպագրուած են միայն հինգ գիրքեր, միւսները որ կը կազմեն 28 ձեռագրերու հսկայ բանակ մը, կը մնան անտպալ:

Տպագրուած գիրքերն են. «Բաստիլի Առումը», «Միսիանիզմ», «Ֆրէտերիս Էնկէլ», «Լիբերալներ եւ Սոցիալիստներ» եւ «Նոյնե Զնար»:

Անտիպ ձեռագիրներն են. «Ֆրանսական Մեծնախաղիզ», «Հայաստանեայց Եկեղեցին Ազգային ճակատի Վրայ», «Քրիստոնէական Եկեղեցին Երեք Պլաններու Վրայ», «Ցարական Տրամադրան», «Անխուսափելի», «Քեանտիտուսը Նագր Աղան», «Բարխուտար», «Իշխան Նացվարով», «Նիւթ եւ Ոգի», «Գրականութիւն եւ Արուեստ», «Մատերիալիզմ եւ Իտելիզմ», «Գեոմիտրիա եւ Գիկտատորա», «Ազգ եւ Ազգային Հարց», «Կեանք եւ Մահ», «Անհատական Ազատութիւնը», «Ի՞նչ-Ինչո՞ւ-Ինչպե՞ս», «Քառն եւ Մէկ», «Յեղափոխական Սոցիալիզմ», «Մազում Վահէ», «Ռուսական Մեծ Գրականութիւնը», «Մարկոս Պոպարիս», «Միայնատութիւն եւ Հանրապետութիւն», «Տիեզերական Հայաստանը», «Աշխարհի Մտեղծագործութիւնը», «Եւրոպական Կուլտուրայի Ակերը», «Հաւասարութեան Տրամաբանութիւնը» եւ «Համաշխարհային Պատերազմը», եւ այլն:

Անտիպ մնացած տոյն 28 ձեռագիրներուն մէջ հմտացի հայեացքներով լեցուն գեղեցիկ ուսումնասիրութիւններ կան, որոնց լոյս ընծայելու հոգը կը ծանրանայ Հնչակեան կուսակցութեան եւ հնչակեան ընկերներու ուսերուն:

Մարդը իր մահէն յետոյ կ'ապրի իր կատարած գործերով: Ընկեր Բագրատ Միւնիքը իրենց հոյակապ գործերով միշտ ապրող մեր ԱՆՄԱՀՆԵԲԵՆ մէկն է:

Փա՛ռք անոր յիշատակին:

Համադրեց՝ Ա. Շ. (Տար. 3 եւ վերջ)

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉԵՐՔԷ ԸՍՏ ՊՐԱՅՉԱՅԻ՝ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱՐԱԾԵԼԵՐԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ

ԵԱԿ-ի Միւնիքի խումբի ամերիկացի համանախագահ Մեթիու Պրայզ «Էխօ Մոսկուա» մայրաքաղաքի կայանին տուած հարցազրույցի մէջ, անգամ մը այն սիրանդի յայտարարութեամբ լարուածութիւն ստեղծած է հայ-ատրպէյճանական բանակցութեանց մէջ:

Անորադառնալով Ղարաբաղի եւ անոր յարակից ազատագրուած շրջաններու հարցին՝ Պրայզն յայտնած է, որ «Այդ շրջանները մեր բանակցութիւններուն կարեւոր մէկ մասը կը հանդիսանան: Իմ կարծիքով, ի վերջոյ տարածքները ետ պիտի վերադարձուին, իսկ ատրպէյճանցի փախստականներն ալ պիտի վերադառնան այդ շրջանները: Այս հանգրուանին չեմ կըրտար ըսել, թէ ի՞նչ պիտի ըլլայ Ղարաբաղի ճակատագիրը: Մենք գիտենք, որ Ղարաբաղը լոր իրավիճակ պիտի ունենայ: Թէ ի՞նչ կարգավիճակ պիտի տրուի անոր դժուար է ըսել, որովհետեւ այդ հարցին շուրջ բանակցութիւնները տակաւին ընթացքի մէջ են: Ինչ կը վերաբերի Ղարաբաղին եւ այլ տարածքներուն, ապա անոնք քայլ առ քայլ, աստիճանաբար պիտի վերադարձուին Ատրպէյճանին՝ փախստականներուն հետ միասին»:

Պրայզ ղարաբաղեան հիմնախնդիրի շուրջ բանակցութիւններուն մէջ կը կարծէ, որ բեկում մը տեղի պիտի ունենայ Ատրպէյճանի եւ Հայաստանի նախագահներու Ս. Փետրոսպոլի մէջ ունենալիք հանդիպման ընթացքին:

«Նախագահներուն մեծ աշխատանք կը սպասէ: Բայց, միւս կողմէ, անոնք քայլ առ քայլ առաջ կը շարժին: Հաւանաբար բեկումային պահը աւարտին էլ կըրցած հասցնել, քայլ դրած են անոր հիմքը, եւ յոյսով են, որ Ս. Փետրոսպոլի մէջ նման բեկումային պահ հնարաւոր կը դառնայ», յայտնած է Պրայզը:

Ամերիկացի միջնորդ ընդգծած է, որ հակամարտութեան վերջնական լուծումը պէտք է «հաւասարակշռուած» ըլլայ: Ինչ սիւնեան այն սկզբունքներու տեսանկիւնէն, որոնք կը վերաբերին «ինքնորոշման, տարածքային ամբողջականութեան եւ ուժի չկիրառման»:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլ խօսնակ Տիգրան Բալայեան պատասխանելով Պրայզայի վերոնշեալ յայտարարութեան մասին այն հարցումին, թէ՛ «Յայտարարութիւններ են հնչում, որ Պրահայում Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներին հանդիպման ժամանակ ընտրուել է Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակի վերահսկողութեան տակ գտնուող տարածքներից գործերի դուրսբերման հարցը»՝ ան յայտնած է. «Պրահայում Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների միջեւ կայացած հանդիպմանը տարածքներից դուրս գալու հարց ընդհանրապէս չի ընտրուել: Քննարկումները հիմնականում ընթացել են Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ, եւ դա բնական է, քանի որ դա արցախեան հիմնախնդրի կարգաւորման կենտրոնական հարցն է»:

Նշենք, որ Մեթիու Պրայզն ինք. «Մետիամաքս» գործակալութեան տուած հարցազրույցի մէջ հեղքում մը կատարած է, ըսելով, որ «Էխօ Մոսկուա»-ին տուած իմ հարցազրույցի ծայրագրութիւնը, որ տեղադրուած է այդ ռատիոկայանի կայքի վրայ, կը հաստատէ, որ ես չեմ ըսած այն մասին, որ «Ղարաբաղը եւ այլ տարածքները» պիտի վերադարձուին Ատրպէյճանին: Ես ըսած եմ, որ ԵԱԿ Միւնիքի խումբի առաջարկներու համաձայն, «տարածքները» պիտի վերադարձուին Ատրպէյճանին, սակայն Լեռնային Ղարաբաղը պիտի ստանայ լոր իրավիճակ կամ կարգավիճակ մը, որու էութիւնը բանակցութիւններու առարկայ է»:

Ընտրական Լուրեր

ՊԵՅՐՈՒԹԻ ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐԱԾԵՐՉԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Պէյրուսի առաջին ընտրաշրջանին մէջ 14 Մարտի ուժերուն թեկնածուները, շարունակելով իրենց ընտրական գործունէութիւնը, հաւաք մը կազմակերպեցին Աշրեֆիէի մէջ Ռըմէլի, Սայֆիի եւ Աշրեֆիէի մեծ թիւով բնակիչներու ներկայութեամբ:

Նախարար եւ թեկնածու ժան Օղասապեան խօսք առնելով ի միջի այլոց ըսաւ. «Եթէ խորհրդարան հասնիւք, այդ պիտի ըլլայ ձեր շնորհիւ: Պիտի կազմենք ներդաշնակ խումբ մը: Մենք ճակատագրական հանգրուանի մը առջեւ ենք եւ պիտի մնանք պայքարի նոյն ճամբուն վրայ: 7 Յունիսը յաղթանակի օր մը պիտի ըլլայ»:

Նոյն հաւաքին ընթացքին խօսք առին նաեւ թեկնածուներ Նէլա Թուէլիսի եւ Նետիմ Ճեմալը:

Նմանապէս, Մամուլթելի ճաշարաններէն մէկուն մէջ կայացաւ ընթրիք-հանդիպում մը, որուն ընթացքին խօսք առին երեսփոխան Միշէլ Ֆարառնը եւ թեկնածուներ Նետիմ Ճեմալը, Նէլա Թուէլիսի եւ Նախարար ժան Օղասապեանը:

Մեթիի ընտրաշրջանին մէջ յոյն կաթողիկէ աթոռի թեկնածու Էլի Բարաւէ գոյուցուց, թէ «ընտրութեանց մէջ 8 Մարտի խմբակին յաղթանակը պիտի առաջնորդէ վտանգաւոր փլուզումի մը, սահմանադրական եւ պաշտօնական հաստատութիւններուն, որոնք միջոցաւ կ'իշխէ պետութիւնը»:

Հիւսիսային Մեթիի շրջանին մէջ մարտի աթոռներուն թեկնածու Սարգիս Սարգիս հարողորագրութիւն մը լոյս ընծայելով պարզեց, թէ ինք «Մեթիի փրկութեան ցանկ»-ին մէջ 14 Մարտի ուժերուն հետ զինակցած անկախ թեկնածու մըն է:

Քեսրուանի ընտրաշրջանին մէջ մարտի աթոռներուն թեկնածու Զամիլ Հիատէ դիտել տուաւ, թէ «Քեսրուանի մէջ առաջադրուած կեղոնական հարցն է քուէարկողներուն առջեւ ազատ պայմաններ ստեղծելու անհրաժեշտութիւնը, որպէսզի կարենան ընտրանք կատարել քաղաքական յստակ երկու գիծերու միջեւ»:

Աքքարի շրջանին մէջ սիւնի աթոռի թեկնածու Սուհամ-Մետ Սըլէյման, մամուլ ասուլիսի մը ընթացքին, հաստատեց իրեն անկախ թեկնածու իր թեկնածութիւնը շարունակելու:

Տրնիի ընտրաշրջանին մէջ սիւնի գոյգ աթոռներէն մէկուն թեկնածու Ապտըլ Զատէր Շամի հերքեց այն տարածայնութիւնները, որոնք կը խօսին ընտրապայքարէն իր քաշելուն մասին: